ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-18/23

ք. Երևան «26» «04» 2018 թ.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պատվիրատու/, մի կողմից, և «Բաբունի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Պետրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Կատարող/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել շտեմարանների տպագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին N 2 հավելված գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 26090000 (քսանվեց միլիոն իննսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային

պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Բաբունի>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	Գ. Գառնի 2215
ՀՀ ՖՆ աշխատակազմի	
գործառնական վարչություն	<<Արարատբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 900011005122	Հ/Հ 1510019414010100
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 03537445
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Պետրոսյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

26 04 Հավելված 1
<<26>> <<04>> 2018թ կնքված
ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-18/ 23 գնման պայմանագրի

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

Գնման առարկա են հանդիսանում շտեմարանների տպագրման ծառայությունները
/այսուհետ՝ Ծառայություն/

Չափաբաժին	Անվանում	Հեղինակներ	Տեխնիկական հատկանիշներ				
			Չափսը	Էջերի քանակը	Գույնը	Կազմի գույնը	Թուղթը
1	**Ուսումնաօժանդակ նյութերի /շտեմարանների/ տպագրման ծառայություններ-1, այդ թվում՝**						
	<<Անգլերեն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 1)	հեղինակային խումբ	70X100 1/16	302	1	4	օֆսեթ 70 գրամ
	<<Անգլերեն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 2)	հեղինակային խումբ	70X100 1/16	335	1	4	օֆսեթ 70 գրամ
	<<Անգլերեն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 3)	հեղինակային խումբ	70X100 1/16	287	1	4	օֆսեթ 70 գրամ
	<<Մաթեմատիկա>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 1)	հեղինակային խումբ	70X100 1/16	286	1	4	օֆսեթ 70 գրամ
	<<Մաթեմատիկա>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 2)	հեղինակային խումբ	70X100 1/16	294	1	4	օֆսեթ 70 գրամ
2	**Ուսումնաօժանդակ նյութերի /շտեմարանների/ տպագրման ծառայություններ-2, այդ թվում՝**						
	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 1)	հեղինակային խումբ	60X84/8	295	1	4	օֆսեթ 70 գրամ
	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 2)	հեղինակային խումբ	60X84/8	302	1	4	օֆսեթ 70 գրամ
	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 3)	հեղինակային խումբ	60X84/8	295	1	4	օֆսեթ 70 գրամ
	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 4)	հեղինակային խումբ	60X84/8	288	1	4	օֆսեթ 70 գրամ

Ելքային տեղեկությունները

Հատուկ նշագրում

Փոխադրումը և բեռնաթափումը

Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակչություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Կազմի վրա, տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝<<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

Կատարողի կողմից, համաձայն կից 1-3 բաշխման ցուցակի:

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ա. Պետրոսյան

Բաշխման ցուցակ 1

<<Անգլերեն>> առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանների <<Ռաբունի>> ՍՊԸ

Հ/Հ	Մարզի անվանումը, դպրոցները	<<Անգլերեն>> /Մաս 1/	<<Անգլերեն>> /Մաս 2/	<<Անգլերեն>> /Մաս 3/	Նշումներ
1	**Երևան՝**	20	20	20	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն
2	**Արագածոտն՝**				ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	57	57	57	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	3	3	3	
3	**Արարատ՝**				ՀՀ Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	75	75	75	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	5	5	5	
4	**Արմավիր՝**				ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	73	73	73	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	7	7	7	
5	**Գեղարքունիք՝**				ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	72	72	72	
	ԿԳՆ ենթակայության	8	8	8	
6	**Լոռի՝**				ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	77	77	77	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	13	13	13	
7	**Կոտայք՝**				ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	40	40	40	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	12	12	12	
8	**Շիրակ՝**				ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	83	83	83	
	ԿԳՆ ենթակայության	17	17	17	
9	**Սյունիք՝**				ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	60	60	60	
	ԿԳՆ ենթակայության	5	5	5	

10	**Վայոց Ձոր՝** *Միջնակարգ դպրոցներ*	30	30	30	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	3	3	3	
11	**Տավուշ՝** *Միջնակարգ դպրոցներ*	36	36	36	ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	4	4	4	
12	ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ	100	100	100	Երևանի թիվ 114 ավագ դպրոց
	ԸՆԴԱՄԵՆԸ	**800**	**800**	**800**	

Պատվիրատու

---------- Ն. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ.

Կատարող

---------- Ա. Պետրոսյան
(ստորագրություն) Կ.Տ.

Բաշխման ցուցակ 2

<<Մաթեմատիկա>> առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանների <<Ռաբունի>> ՍՊԸ

Հ/հ	Մարզի անվանումը, դպրոցները	<< Մաթեմատիկա >> /Մաս 1/	<< Մաթեմատիկա >> /Մաս 2/	Նշումներ
1	**Երևան՝**	40	40	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն
2	**Արագածոտն՝** *Միջնակարգ դպրոցներ*	94	94	ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	6	6	
3	**Արարատ՝** *Միջնակարգ դպրոցներ*	100	100	ՀՀ Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	10	10	
4	**Արմավիր՝** *Միջնակարգ դպրոցներ*	106	106	ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	14	14	
5	**Գեղարքունիք՝** *Միջնակարգ դպրոցներ*	114	114	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	16	16	
6	**Լոռի՝** *Միջնակարգ դպրոցներ*	114	114	ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	26	26	
7	**Կոտայք՝** *Միջնակարգ դպրոցներ*	66	66	ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	24	24	
8	**Շիրակ՝** *Միջնակարգ դպրոցներ*	136	136	ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	34	34	
9	**Սյունիք՝** *Միջնակարգ դպրոցներ*	90	90	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	10	10	
10	**Վայոց Ձոր՝**	64	64	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի

	Միջնակարգ դպրոցներ			կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	6	6	
11	**Տավուշ՝**			<< Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	Միջնակարգ դպրոցներ	72	72	
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	8	8	
12	ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ	150	150	Երևանի թիվ 114 ավագ դպրոց
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1300**	**1300**	

Պատվիրատու

---------- Ն. Հարությունյան

(ստորագրություն) Կ.Տ.

Կատարող

---------- Ա. Պետրոսյան

(ստորագրություն) Կ.Տ.

Բաշխման ցուցակ 3

<<Հայոց լեզու և հայ գրականություն>> առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանների <<Ռաբունի>> ՍՊԸ

Հ/հ	Մարզի անվանումը, դպրոցները	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> /Մաս 1/	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> /Մաս 2/	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> /Մաս 3/	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> /Մաս 4/	Նշումներ
1	**Երևան՝**	40	40	40	40	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն
2	**Արագածոտն՝** *Միջնակարգ դպրոցներ*	94	94	94	94	ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	6	6	6	6	
3	**Արարատ՝** *Միջնակարգ դպրոցներ*	100	100	100	100	ՀՀ Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	10	10	10	10	
4	**Արմավիր՝** *Միջնակարգ դպրոցներ*	106	106	106	106	ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	14	14	14	14	
5	**Գեղարքունիք՝** *Միջնակարգ դպրոցներ*	114	114	114	114	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	16	16	16	16	
6	**Լոռի՝** *Միջնակարգ դպրոցներ*	114	114	114	114	ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	26	26	26	26	
7	**Կոտայք՝** *Միջնակարգ դպրոցներ*	66	66	66	66	ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	24	24	24	24	
8	**Շիրակ՝** *Միջնակարգ դպրոցներ*	136	136	136	136	ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	34	34	34	34	
9	**Սյունիք՝** *Միջնակարգ դպրոցներ*	90	90	90	90	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության	10	10	10	10	
10	**Վայոց Ձոր՝** *Միջնակարգ դպրոցներ*	64	64	64	64	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի

	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	6	6	6	6	կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
11	**Տավուշ՝** *Միջնակարգ դպրոցներ*	72	72	72	72	ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	8	8	8	8	
12	ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ	150	150	150	150	Երևանի թիվ 114 ավագ դպրոց
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1300**	**1300**	**1300**	**1300**	

Պատվիրատու

---------- Ն. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ.

Կատարող

---------- Ա. Պետրոսյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
<<26>> <<04>> 2018թ. կնքված
N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-18/23 գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

Չափաբաժին	Գնման առարկայի անվանումը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Չափման միավորը	Միավորի գինը, հազ.դրամ	Ենթակա է գնման 2018թ-ի ընթացքում՝ ընդ որում. 2-րդ եռամսյակ /մինչև մայիսի 15-ը/		Ընդամենը	
					քանակը	գումարը, հազ.դրամ	քանակը	գումարը, հազ.դրամ
1	**Ուսումնաօժանդակ նյութերի /շտեմարանների/ տպագրման ծառայություններ-1, այդ թվում՝**	**79821200/40**						
	<<Անգլերեն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 1)		հատ	2.15	800	1720.00	800	1720.00
	<<Անգլերեն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 2)		հատ	2.15	800	1720.00	800	1720.00
	<<Անգլերեն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 3)		հատ	2.15	800	1720.00	800	1720.00
	<<Մաթեմատիկա>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 1)		հատ	2.15	1300	2795.00	1300	2795.00
	<<Մաթեմատիկա>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 2)		հատ	2.15	1300	2795.00	1300	2795.00

2	**Ուսումնաօժանդակ նյութերի /շտեմարանների/ տպագրման ծառայություններ-2, այդ թվում՝**	79821200/41						
	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 1)		հատ	2.95	1300	3835.00	1300	3835.00
	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 2)		հատ	2.95	1300	3835.00	1300	3835.00
	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 3)		հատ	2.95	1300	3835.00	1300	3835.00
	<<Հայոց լեզու և հայ գրականություն>> (պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան) (մաս 4)		հատ	2.95	1300	3835.00	1300	3835.00
Ընդամենը								**26090.000**

Պատվիրատու

_____ Ն. Հարությունյան

Կատարող

_____ Ա. Պետրոսյան

Հավելված 3

<<26>> <<04>> 2018թ կնքված

N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-18/23 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Չափաբաժին	Ծառայության անվանումը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Ենթակա է վճարման << 2018թվականի պետական բյուջեի՝ <<Ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում>> ծրագրից, ընդ որում՝												
				1-ին եռամսյակ			1-ին կիսամյակ			9 ամիս			տարի			Ընդամենը
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր /մինչև դեկտեմբերի 20-ը/	
1	Ուսումնաօժանդակ նյութերի տպագրման ծառայություններ-1, այդ թվում՝ շտեմարանների տպագրման ծառայություններ	79821200/40	4263					10750,0	10750,0	10750,0	10750,0	10750,0	10750,0	10750,0	10750,0	10750,0
2	Ուսումնաօժանդակ նյութերի տպագրման ծառայություններ-2, այդ թվում՝ շտեմարանների տպագրման ծառայություններ	79821200/41	4263					15340,0	15340,0	15340,0	15340,0	15340,0	15340,0	15340,0	15340,0	15340,0

Պատվիրատու

_____ Ն. Հարությունյան

Կատարող

_____ Ա. Պետրոսյան